



Մարտ 8, 1994

Գերաշնորհ՝  
Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան  
Առաջնորդ Ամերիկահայոց Արևելեան Թեմի  
630 Երկրորդ Պողոտայ  
New York, NY 10016-4885

Յարգելի Սրբազան Հայր,

Այս գրութեամբ Ձեզի կը հաղորդեմ որ մեր Եկեղեցոյ Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, Փետրուար 27, 1994 Արևազայի Ժամերգութենէն վերջ, ժամը 1:00ին: Ներկայ էին իրենց լման տուրքերը վճարած իննսուները անդամներն քառասուն եւ հինգը գոյացնելով մեծամասնութիւն: Օրուան դիւանը կը բաղկանար Բարլի Արսլանեանէ որպէս Ատենապետ եւ Լեզի Պաղտասարեանէ որպէս Ատենադպիր:

Գաղտնի քուէարկութեամբ եկեղեցոյ **Ծխական Խորհուրդի** անդամ ընտրուեցան հետեւեալ անձինք՝ Տիգրան Արսլանեան 36 քուէով, Սերոբ Տեմիրճեան 32 քուէով, Սեպուհ Սեդրաքեան 28 քուէով, Բոպորդ Տոմարասի 26 քուէով իսկ որպէս փոխանորդ Հայկ Արփաճեան 22 քուէով:

**Ընտրողական Յանձնախումբի** անդամ ընտրուեցան՝ Անիդա Արփաճեան 32 քուէով, Լուսինի Անտոնեան 29 քուէով, Բարլի Արսլանեան 26 քուէով իսկ որպէս փոխանորդ Ալիս Հաչերեան 16 քուէով: **Հաշուեքննիչ Յանձնախումբի** անդամ ընտրուեցան՝ Արշավիր Անտոնեան 32 քուէով, Ճէյ Պաղտասարեան 31 քուէով, Շերլի Արսլանեան Կիտիրն 30 քուէով, իսկ որպէս փոխանորդ Սիմոնի Արսլանեան Բարլի 29 քուէով:

Ուստի կը խնդրեմ Ձեր Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները որպէսզի առիթը ունենանք ծխական խորհուրդի նոր դիւանը ընտրելու հնարաւոր փութով: Ընդունեցէք մեր կանխայայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթանքները:

Յարգանքով՝

Նորայր Սարկուսագ Օտապաշեան  
Հոգեւոր Հովիւ

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH  
678 Richmond Road  
Richmond Heights, Ohio 44143  
(216) 381-6590



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1735  
Ապրիլ 14, 1994

Բարեջնորհ  
Նորայր Սրկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Օհայօ.

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Սուսցած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 8, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 27, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Տիգրան Արսլանեան
- Սերոբ Տէմիրճեան
- Սեպուհ Սեդրաքեան
- Ռապրոթ Տոմարավաքի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Էջ 4-ի եւ 6-ի ծխական տուրքերու գումարները հրարու չեն համապատասխաներ: 1994 տարուան պիտօճէն վնաս կը նախատեսէ: Հաշուեքննիչ Յանձնախումբը չէ յիշած հաշուական տեղեկագիրներուն աղբիւրը (էջ 12): Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը ամբողջական չէ. այս տեղեկագիրը պէտք է ստորագրուի Ծխական Խորհուրդի երկու անդամներու կողմէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1817  
Յունիս 16, 1994

Բարեջնորժ  
Նորայր Սրկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Ռիչմոնտ Հայթց.

Սիրելի Նորայր Սարկաւագ.

Ստացած ենք Մայիս 24, 1994 թուակիր նամակդ, որով կը տեղեկացնես թէ Ծխական Խորհուրդի անդամներէն Անտոն Երանոսեան իր անձնական գործին պատճառաւ ներկայացուցած է իր հրաժարականը: (Պատշաճ է որ հրաժարական նամակին օրինակը ներփակէիր:)

Այս գրութեամբ կը հաստատենք Հայկ Արփաճեանը որպէս անդամ Ծխական Խորհուրդի՝ հրաժարեալ Անտոն Երանոսեանի տեղ, մինչեւ աւարտումը անոր շրջանին:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԳ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԻԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2029  
Ապրիլ 13, 1995

Բարեջնոր՝  
Նորայր Արկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Գլխվլընտ.

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 10, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 5, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:


Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Նազարէթ Եսայեան  
Ռապրոթ Պաղտասարեան  
Մոնա Գարօղլանեան  
Տէյվիտ Անտոնեան  
Թելմա Պաղտասարեան

Բարի եղէք շատով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցաւորներ աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

  
ԽԱԺԱԿ ԱՐԿ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

Ս. Գրիգոր Նարեկացի Հայաստանայց Եկեղեցի  
St. Gregory of Narek Armenian Church

678 Richmond Road • Richmond Heights, Ohio 44143 • 216-381-6590

Մայիս 16, 1995

Գերազնորի՝  
Տեր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան  
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի  
630 Երկրորդ Պողոտայ  
New York, NY 10016-4885

May 1-3, 1997

Յարգելի Սրբազան Հայր,

Ըստ հասկացողութեանս պաշտօնապէս ընդունուեցաւ որ 1997 թուականի  
Հոգեւորականաց Համագումարը եւ 95րդ Թեմական Պատգամաւորական Ժողովը տեղի  
պիտի ունենան Գլխվրմտի Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցոյ հիւրընկալութեամբ:

Որպէս զի մեր յանձնախումբը սկսի իր պատրաստական աշխատանքը կարելոր է  
գիտնալ ճիշտ թուականները թէ Հոգեւորականաց Համագումարին եւ թէ Թեմական  
Պատգամաւորական Ժողովին:

Նաեւ շատ օգտակար կ'ըլլայ եթէ մեզի զաղափար կարենաք տալ մօտաւորապէս  
որքան մասնակիցներու սպասենք եւ որուն հետ կապի մէջ պէտք է մտնենք պատրաստութեանց  
առնչութեամբ կամ Դիւանապետին կամ Առաջնորդական Փոխանորդին:

Ենորհակալութիւն Ձեր հետաքրքրութեան այս հարցով եւ կը մնամ

Յարգանքով՝

Նորայր Մարկուս Ծտապաշեան  
Հոգեւոր Մատակարար

Այ - 28-29 30



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

**Archbishop Khajag Barsamian, Primate**

**Թի 2136**  
**Յուլիս 27, 1995**

**Բարեջնորհ**  
**Նորայր Սրկ. Օտապաշեան**  
**Հոգևոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ**  
**Գլխվընտ.**

**Սիրելի Նորայր Սարկաւագ,**

Ստացած ենք Մայիս 16, 1995 թուակիր նամակրդ որով հարց կու տաս թէ Եկեղեցւոյդ հիւրընկալութեամբ տեղի ունենալիք 1997 տարուան Հոգևորականաց Համագումարն ու 95-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը ո՞ր թուականներուն պիտի գումարուին:

Հոգևորականաց Համագումարը տեղի պիտի ունենայ 1997 Ապրիլ 28-30, եւ 95-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը՝ 1995 Մայիս 1-3 օրերուն:

Յաւելեալ մանրամասնութեանց համար Յանձնախումբը կրնայ դիմել Առաջնորդարանի դիւանապետ Արժշ. Տ. Կարապետ Բհնյ. Բոշաքեանի: Կրնաք օգտուիլ նաեւ նախորդ տարիներու հիւրընկալ համայնքներու փորձառութենէն:

**Սիրոյ ողջունի**

*Խաճապ Արք. Պրսասեան*

**ԽԱՃԱԿ ԱՐԷ. ՊՐՍԱՍԵԱՆ**  
**Առաջնորդ**



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2302  
Մարտ 27, 1996

Բարեջնորհ  
Նորայր Արկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար  
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Ռիչմոնտ Հայթց

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 14, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 25, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կը տրուի քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրուի նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Արշաիր Անտոնեան  
Վլատիմիր Արութիւնով  
Արա Պաղտասարեան  
Սեպուհ Սեդրաքեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ 1995 տարուան ծխական տարետուրքը տակաւին չէ վճարուած:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

April 23, 1996

Sebouh Setrakian, M.D.  
Parish Council Chairmen  
St. Gregory of Narek Armenian Church  
678 Richmond Road  
Richmond Heights, Ohio 44143-2901

Dear Dr. Setrakian:

I am pleased to inform you that Dn. Norman Odabashian has accepted my appointment as the Group Leader for the Department of Youth Ministry's "Young Professionals Trip to Armenia". The program will take place June 7-17, 1996 with a planning day on June 6.

As this is a Diocesan assignment, it should not be considered as vacation time. Please inform us if you would like a clergyman to visit your parish one of the two Sundays in which Dn. Norman is in Armenia.

With prayers,

*Abp. K. Barsamian*

Archbishop Khajag Barsamian  
Primate



Մ. Գրիգոր Նարեկացի Հայաստանեայց Եկեղեցի  
St. Gregory of Narek Armenian Church

678 Richmond Road • Richmond Heights, Ohio 44143 • 216-381-6590

Օգոստոս 20, 1996

Գերաշնորհ Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Պարամեան  
Առաջնորդ  
Ամերիկահայոց Արեւելեան Թեմի  
630 Երկրորդ Պողոտայ  
Նիւ Եորք, Ն.Ե. 10016

Սրբազան Հայր,

Աւելի քան ութը տարի կը ծառայեմ Հայաստանեայց Եկեղեցւոյ սարկաւազի Հանգամանքով ամենայն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ:

1988-ին սարկաւազ ձեռնադրուեցայ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի ձեռամբ եւ նոյն տարին շրջանաւարտ եղայ Ս. Ներսէս եւ Ս. Վլատիմիր Աստուածաբանական Ընծայարաններէն: Վեց ամիս ապրեցայ Երուսաղէմի Ս. Յակոբեանց եւ մէկ տարի Ս. Էջմիածնի Վանքերէն ներս, ուր ստացայ Հայեցի ուսուցում, նոյն ատեն ներշնչուելով վանական զոյգ միջնորդութիւններէն:

Մօտ երկու տարի ծառայեցի Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ որպէս Հովիւի օգնական եւ 1992էն ի վեր կը պաշտօնավարեմ Քլիվլենտահայոց Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ մէջ որպէս Հոգեւոր մատակարար:

Սոյն գրութեամբ խոնարհաբար կը մատչիմ Ձերդ Սրբազնութեանդ մասնաւոր խնդրանքով մը որ եթէ յարմար դատէք՝ զիս ձեռնադրէք կուսակրօն քահանայ քան զի պատրաստ եմ բոլորանուէր ծառայելու Աստուծոյ, Հայ ժողովրդեան եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Բարի եղէք Ձեր յարմար ժամանակին անդրադառնալու այս Հարցին եւ տեղեկացնելով ինձ Ձեր մտածումներուն եւ ծրագիրներուն:

Մատչելով Ձեր սուրբ աջոյն եւ խնդրելով Ձեր օրհնութիւնները մնամ՝



Նորայր Սարկաւազ Օտապաշեան



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA .  
ԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2452  
Սեպտեմբեր 23, 1996

Բարեջնորհ  
Նորայր Արկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ  
Ռիչմոնտ Հայթց

Սիրելի Նորայր Սարկաւագ,

Ստացած ենք Օգոստոս 20, 1996 թուակիր նամակդ՝ որով եկեղեցական գործունէութեանդ մասին կարգ մը տեղեկութիւններ տալէ ետք՝ փափաք կը յայտնես կուսակրօն քահանայ ձեռնադրուիլ:

Որպէս կուսակրօն քահանայ մեր Տիրոջ եւ Հայ Եկեղեցույ ծառայելու այս որոշումդ մեզ հոգեպէս ուրախացուց: Սիրով կ'ընդառնաք փափաքիդ եւ կը ծրագրենք տարույս Նոյեմբեր 30-ի շաբաթավերջը այցելել համայնքդ եւ քեզ կուսակրօն քահանայ ձեռնադրել:

Ծաբաթ Նոյեմբեր 30-ի երեկոյեան Կոչման արարողութիւնը տեղի պիտի ունենայ, իսկ Կիրակ Դեկտեմբեր 1-ին, յընթացս Ա. Պատարագի՝ Զեռնադրութիւն, Օծում եւ Վեղարի Տուչութիւն:

Այս մասին մենք կը գրենք Ծխական Խորհուրդիդ՝ որպէս զի անհրաժեշտ կարգադրութիւնները տեսնուին ձեռնադրութեանդ կապակցութեամբ:

Կ'աղօթենք որ Տէրը քեզ հաստատ պահէ Իրեն եւ Հայ Եկեղեցույ ծառայելու քու որոշումիդ մէջ, եւ Իր օրհնութիւնները առատացնէ քու վրայ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2466  
Սեպտեմբեր 27, 1996

Բարեջնորհ  
Նորայր Սրկ. Օտապաշեան  
Հոգևոր Մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Ռիչմընտ Հայթց

Սիրելի Նորայր սարկաւագ,

Ստացած ենք Սեպտեմբեր 19, 1996 թուակիր նամակըդ որով տեղեկութիւններ կու տաս Արժշ. Տ. Ներսէս Ա. Քհնյ. Ծէպէնեանի հետ երկու «միշըն» ծովխերուն տուած ձեր այցելութեան մասին:

Տուած տեղեկութիւններդ գոհացուցիչ գտանք: Մեր ուրախութիւնն ու գնահատանքը կը յայտնենք քեզի եւ Տէր Ներսէսին՝ ձեր այցելութիւններուն եւ կատարած կազմակերպչական աշխատանքներուն համար: Յուսով ենք որ մօտաւոր ապագային այդ աշխատանքները կ'արդիւնաւորուին:

Քեզի առաւել քաջառողջութիւն եւ աստուածահաճոյ ու եկեղեցանուէր գործերուդ յաջողութիւն կը մաղթենք:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ